

Ձ. ՌԱՍԵԼԻ «ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ» ՀՆԱՐԱՆՔՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1997 թ. ԱՄՆ-ում անգլերենով լույս է տեսել «Հայ ժողովուրդը Հնից մինչև նոր ժամանակները» երկհատոր աշխատությունը¹, որտեղ առաջին անգամ արևմտյան, մեծ մասամբ ամերիկահայ, հեղինակների ուժերով ներկայացված է հայոց ողջ պատմությունը: Հայ ժողովրդի ձևավորման, նախապատմության, Ուրարտուի պատմության ու մշակույթի և հայերենի հնդեվրոպական ակունքների վերաբերյալ «Հայ ժողովրդի ձևավորումը» կոչվող բաժնի հեղինակն է ամերիկյան հայագետ, Հարվարդի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների պրոֆեսոր Ջեյմս Ռասելը: Մեր ասելիքը վերաբերում է հենց այդ բաժնին և Ռասելի մի քանի այլ գործերի:

Սովորաբար գրախոսության մեջ քննարկվում են աշխատության ուժեղ և թույլ կողմերը, արժանիքներն ու թերությունները, գնահատվում նոր մտքերը և այլն: Բայց այս համեմատաբար ոչ ծավալուն տեքստը (կջ 19-35) լի է այնպիսի կեղծ զիտական մտքերով և արտաոռոց սխալներով, որ նման մոտեցումն անհնար ու անիմաստ է:

Ստորև ուղղակի նշվում են դրանցից մի քանիսը:

Կջ 25: «Խեթերեն (Hittite) կամ խաթերեն (Hattic) լեզուն պատկանել է հնդեվրոպական լեզուների արևմտյան ճյուղին»: Իրականում խաթերենը նույնական չէ խեթերենի հետ և, առավել ևս, հնդեվրոպական լեզու էլ չէ: Խաթերը (անդլ. Hattians) Փոքր Ասիայի հնագույն բնիկներն էին, ոչ ճշգրիտ կերպով երբեմն նաև «նախախեթեր» կոչված, որոնք մ.թ.ա. երկրորդ հազարամյակի սկզբին ձուլվեցին հնդեվրոպական խեթերի (Hittites) մեջ, իրենց անվանումը թողնելով նրանց ու նրանց ժառանգներին: Խաթերեն լեզուն ավանդված է մի շարք կրոնական և ծիսական տեքստերով, բնդ որում, խեթերեն այն կոչվել է hattili, և իստորեն տարբերակվել խեթերենից, որը կոչվել է na/isili կամ nesumnili:

Կջ 27: «Ուրարտուն, առաջնորդված Արամու արքայի կողմից, տարածքներ է նվաճել Մեդիայից»: Այստեղ հեղինակը շփոթում է Ուրարտուի պատմական Արամու արքային, որը ոչ մի կապ չի ունեցել Մեդիայի հետ և հայկական ազդածին ավանդության նահապետ Արամին, որն, ըստ ինքնացուցման, հաղթել է մեդացի Նյուքար Մագեսին:

Կջ 27: «Ն.Ք. ութերորդ դարում Թեյշեբաինի (հայ. Կարմիր բլուր) և Հրեբունի (Արին բերդ) ամրոց-քաղաքները հիմնադրվեցին ներկայիս Երևանի տեղում Արգիշտի Երկրորդ արքայի կողմից: Նրա հաջորդ Ռուսա Երկրորդը կենտրոնացավ ուրարտական իշխանությունն արևմուտքում

¹ The Armenian People from Ancient to Modern Times (ed. by R. Hovannisian). Vol. 1-2. New York, 1997.

ամրացնելու վրա»: Իրականում էրեբունին հիմնել է Արգիշտի Առաջինը, իսկ Թեյշեբախնիի կառուցման մասին ուղղակի տվյալներ չկան. կարելի է ենթադրել, որ այն ևս կառուցել է Արգիշտի Առաջինը կամ Թերևս Ռուսա երկրորդը, նրանից մոտ մեկ գար հետո: Արգիշտի Առաջինին հաջորդել է նրա որդի Սարգուրի երկրորդը:

Էջ 30: Ժողովրդական պատկերացումներում «Վանա լճի փոթորիկները բացատրվել են որպես Վահագն (իրան. Վերեթրագնա) աստծու և վիշապներ կոչվող ընդծովյա օձերի կռիվ»: Իրականում, ըստ Գ. Սրվանձտյանի հաղորդած «Վանա պառավներուն մեկ վեպի», հազար տարեկան դարձած հսկա վիշապին հրեշտակները շղթաներով քաշում են վեր, մինչև արևը մոխրացնում է նրան: Ընդ որում, ըստ մի հին աղբյուրի, փոթորիկը վիշապ հանել է կոչվում², իսկ վիշապին քաշում են և՛ ցամաքից, և՛ լճից, և մի պատկերացման համաձայն վիշապն ապրում է Վանա լճի հատակում³: Մնացածը՝ Վահագնը, Վանա լճի փոթորիկը և այլն, հեղինակի երևակայության արդյունքն է: Իհարկե, Վահագնը հայտնի է որպես վիշապաքաղ, և որոշ աղբյուրների համաձայն նա արևի աստված է եղել, որը Թերևս հնարավորություն է ընձեռում որոշ վեբակազմությունների, բայց հարցն այն է, որ հեղինակն այս մտակառուցումը վերագրում է ժողովրդին⁴:

Էջ 30: «Արծրունի դինաստիայի [...] անվանումը կարող է ծագել ուրարտ. արծիբինի-ից (արծիվ): [...] Մի լեգենդում ասվում է, որ Արծրունիների նախնին երեխա հասակում լքվել է, բայց փրկվել արծվի կողմից, որն իր բնում սնուցել է երեխային»: Իրականում Aršibiñi-ն Ուրարտուի Մենուա արքայի ձիու անունն էր, որը, ելնելով հին հայ. արձուի բառի հետ ունեցած նմանությունից, մեկնարանվում է որպես «արծիվ»: Ինչևէ, հայ. արծիվ բառի ծագումը բնիկ հայկական է, ինչպես լավագույնս ցույց է տվել Ռասելի հարվարդյան գործընկեր Ք. Ուոտկինսը Արտաշես արքայի վեպում արձուի սրաթև բանաստեղծական բանաձևի համեմատական վերլուծությամբ⁵:

Խորենացին մի տեղ (Բ, է) Արծրունիների առնչությամբ ասում է, որ մի գրույցի համաձայն «Թռչունը հովանի է եղել թալկացած պատանուն»: Խորենացու հաղորդման քննությունը հիմք է տալիս որոշակի վերակազմության թռչունը պիտի որ արծիվ լիներ, պատանին պիտի որ Արծ-

2 Ղ. Ա լ ի շ ա ն. Հին Հաւատք կամ Հեթանոսական կրօնք Հայոց. Վենետիկ. 1895, էջ 66, ծան. 1:

3 Գ. Սրվանձտյան. Երկեր. հ. 1. Երևան, 1978, էջ 69-70:

4 Ըստ Ռասելի մի Հոդվածի (Grace From Van. A Micro-Historiola. - *Journal of the Society of Armenian Studies*, 1994, 7, p. 44), Խորենացին իբր հաղորդում է, որ «Իբր հանկարծակի փոթորիկներ են բարձրանում Վանա լճում, դա այն պատճառով է, որ Վահագնը խորքերից քարշ է տալիս հրեշին արևի դիմաց նետելու համար»: Այս գարմանալի հնարանքը հիշվում է նրա նաև այլ աշխատություններում:

5 C. W a t k i n s. How to Kill a Dragon. New York and Oxford, 1995, p. 71. Պետք է նշել, որ ի հակադրություն Ուոտկինսի, որը, հետևելով Լամբերտերիին, Մինուայի ձիու անունը համարում է Հնդկական, այսինքն կասյում է արդեն մ.թ.ա. երկրորդ հազարամյակում անհետացած միտաննիական արիացիների լեզվի հետ, այդ անունը սլետք է մեկնարանվի Հայերեն, քանի որ ուրարտ. s-ն համապատասխանում է միայն հայ. ծ-ին, իսկ նույնարմատ Հնդիրանական ձևերն ունեն ջ և գ Հնչյունները, որոնք սեպագրում կտառադարձվեն z-ով:

րունիների նախնին լինե՞ր⁶, բայց այստեղ ևս գիտական վարկածի, այն էլ սխալ, շարադրանքը ներկայացվում է որպես ժողովրդական ավանդույթ-յուն (պատանու լքման ու սնուցման մասին ասվածը հեղինակի հնարանքն է, որը, հաչյո՞ առնելով նրա իրանագիտական հետաքրքրությունները, հավանաբար փոխ է առնված «Նահնամեում» Ռուստամի հոր՝ Զալի պատմություններից):

Էջ 32: Հայկական ավանդույթյան մեջ Ծիր Կաթինը «Հարգագողի հետք» է կոչվում, որովհետև «Հայկական Վահագն աստվածը, հավանաբար՝ Հայկի փոխարինողը, մի ցուրտ գիշեր կրակի կպչան (*kindling*) է գողացել իր ժողովրդի համար հզոր Բելի երկնային փայտի պահեստարանից» (*from the heavenly woodshed of the mighty Bel*): Իրականում, ըստ Անանիա Նիրակացու բերած լեգենդի, Վահագնը մի խիստ ձմեռ հարզ է գողացել Բարչամից, և իր մի աշխատանքում հեղինակը միանգամայն ճիշտ կերպով հղել ու թարգմանել է այդ լեգենդը⁷: Ցուրտ գիշերը, կրակի կպչանը, փայտի պահեստը, իր ժողովրդին լուսավորելու Վահագնի ձգտումը և հզոր Բելը (Հայկ նահապետի հակառակորդը) հեղինակի հետագա մտավարժույթ-յունների արգասիքներ են միայն:

Այսօրինակ սխալների թվարկումը կարելի է շարունակել, բայց բավարարվենք այսքանով: Այժմ՝ Հայոց ազգածագման մասին հեղինակի մտքերի վերաբերյալ: Բաժինը շարադրված է ըստ ուսու գիտնական Ի. Դյակոնովի 1968 թ. մենագրության (անդլ. թարգմ. 1984)⁸, որն, իհարկե, Հայոց նախապատմության միարժեք աղբյուրը չէ: Այդ խնդրով ղրաղվող իրազեկ գիտնականները չեն կիսել և չեն կիսում Դյակոնովի կարծիքը, և նա մենակ էր իր տեսակետում: Այսպիսի միակողմանի մոտեցումն անընդունելի է Հայ ժողովրդի պատմությունը ներկայացնող գրքի համար, այն էլ գրված ոչ մասնագետի կողմից: Ընդ որում, շարադրանքն ընթանում է առանց Դյակոնովին հղելու՝ կարծես մասնագետ հեղինակն իր սեփական մտքերն է արտահայտում:

Հայոց ազգածագման դյակոնովյան վարկածի համաձայն, նախահայերեն լեզվի կրողները նույնացվում են մ.թ.ա. XII դարի ասորեստանյան աղբյուրներում հիշվող մուշկի/ու ցեղի հետ, որոնք Հայաստան են գաղթել իբր Բայկաններից և սկսել կոչվել կործանված խեթերի ցեղանվան մի անանցյալ ձևով (ըստ XIX դարի վերջին առաջ քաշված Պ. Ենսենի տեսակետի):

Իրազեկ մասնագետների շրջանում անհամեմատ ավելի լայնորեն տարածված Հայաստանի վարկածի համաձայն, Հայերի ցեղանունը կապված է խեթական աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմուտքում մ.թ.ա. XIV–XIII դարերում հիշվող *Hayasa* (անվանված նաև *Azzi*) թագավորության անվան հետ: Ընդ որում, չի բացառվում այդ թագավորության մեջ Հայկական տարրի գոյությունը, այսինքն Հայերի լեզվական նախնիները կարող էին Հայաստանում լինել շատ ավելի վաղ ժա-

6 Մ. Աբեղյան. Երկեր. Հ. Ա, Երևան, 1966, էջ 384-385:

7 J. R u s s e l l. Zoroastrianism in Armenia. Cambridge (MA). London 1987, p. 170.

8 И. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968; I. D i a k o n o f f. The Pre-history of the Armenian People. Delmar, New York, 1984.

մանակներին: Ռասելի համար, որն իր անհամար աշխատություններում փորձել է ցույց տալ, որ հայկական մշակույթում ոչինչ ծագումով հայկական չէ (տե՛ս ստորև), օրդանապես անընդունելի է Հայաստանում հայերի համեմատաբար հին արմատների մասին միտքը, և նա այս վարկածը ներկայացնում է որպես հայերի կողմից ստեղծված մի ինչ-որ նացիոնալիստական հնարանք:

Ռասելի արտադրանքը, ինչպես կտեսնենք, կանխակալ և անընդունելի է նաև Դյակոնովի դրույթների համատեքստում: Ըստ Դյակոնովի տեսությունն ուսելյան մատուցման, նախահայ-մուշկերը եկել են Թրակիայից. նրանց ցեղանունը «աղբյուրն է [...] Կապադովկիայի մայրաքաղաքի Մագակա անվան» (էջ 25): Իրականում, ըստ մ.թ. առաջին դարի հեղինակ Հովսեպոս Փլավիոսի, Կապադովկիայի մայրաքաղաքի անունը կապված է մեսքենների ցեղի, իսկ ըստ Խորենացու՝ Արամ նահապետի կուսակալ Մշակի անունների հետ: Մեսքեն և Մշակ անունները, բայց ոչ Մաղակա (հայ. Մաժակ/ք) տեղանունը ժամանակակից գիտնականները համապատասխանեցնում են մ.թ.ա. XII դարի սեպագիր մուշկ-ձևին: Իսկ Դյակոնովն, ընդհակառակը, նշել է Մագակա < մուշկ տիպի երկուհազարամյա ստուգաբանությունների անհուսալի լինելը⁹. ըստ նրա, ցեղանունն ավելի շուտ կարող է կապվել Մուշ քաղաքանվան հետ¹⁰:

Իր ունակությունների սահմաններում շարունակելով հետևել Դյակոնովին (ըստ Ենսեն-Տալյան-Դյակոնովի վարկածի), Ռասելը հայ ցեղանվան նախաձևը վերականգնում է որպես *hattyos, իբրև «խաթ» (Hattian) նշանակությամբ, հետո նշում, որ այսպիսով, հայերը վերցրել են խեթական (Hittite) մեծ ազգի ու կայսրության անվանումը (էջ 22). իսկ մի այլ տեղ՝ որ փոյուգական և հայկական բնակչությունը մ.թ.ա. երկրորդ հազարամյակի կեսին կամ XIII դարում անցել է Անատոլիա, և հայերի նախնիներն այստեղ վերցրել են խաթ (Hattian) ժողովրդի (որի պետության միջով անցել են իրենք) անվանումը (էջ 24): Անհավատալի է, բայց փաստ՝ ինչպես տեսանք, Հայաստանի ու Փոքր Ասիայի հին պատմության ու մշակույթի մասին գրող հեղինակը չի տարբերակում խաթ և խեթ տերմինները:

Ահա թե ինչպես է շարադրված հայոց ազգածագման հայասական տեսակետը: «Շատ տարիներ առաջ դասական տեսությունը (այսինքն՝ հայոց փոյուգական ծագման վարկածին – Ա. Պ.) մարտահրավեր է նետվել հայ գիտնականների կողմից, ովքեր հայ բառի ծագումը տեսնում էին Հայասա տարածաշրջանի անվան մեջ, հյուսիսային Հայաստանում, և դիտում հայերին որպես տարածաշրջանի բնիկ բնակչություն: Որոշ ուսյալ ոչ հայեր վերջին տարիներին քննադատել են դասական տեսությունը որպես ամբողջություն: Նրանք հայերենը չեն համարում խուռա-ուրարտական լեզու, բայց համարում են այն ըստ էության բնիկ Անատոլիայում...»: Այնուհետև մի քանի խոսք է ասվում հնդեվրոպական նախահայերենի «ուկրիոնիստական» տեսության մասին (սա իրարից չտարբերակված և ա-

9 I. D i a k o n o f f. The Pre-History... p. 132, n. 13.

10 И. Дьяконов. Предыстория... 223; I. D i a k o n o f f. The Pre-History... 195, n. 87.

ոանց անունների հիշվող Գամկրելիձե-իվանովի և Ռենֆրյուի տեսակետների անվանումն է), որը «ժխտվում է մեծամասնության կողմից» (էջ 26):

Գիտական տեսակետից կոռեկտ կլինեք նշել, որ Հայասան մ.թ.ա. XIV–XIII դարերի խեթական աղբյուրներում հիշվում է որպես իրենց կայսրության հետ երբեմն հաջողությամբ պատերազմող մի թագավորություն, և ոչ լոկ տարածաշրջան (ընդ որում, խեթական Սուպալիուլիումա արքան իր քրոջը կնություն էր տվել Հայաստանի արքա Հուգադանային), բայց հեղինակը խուսափել է այդ փաստերը հաղորդելուց, ըստ երևույթին «հայկական աղբյուրներում» տուրք չտալու համար: Հին հնդեվրոպացիների նախահայրենիքի անատոլիական տեղագրության «ուղիղունիստական» վարկածն էլ առաջ է քաշվել ոչ թե վերջին ժամանակներս, և ոչ նույնիսկ XX դարում (այդ մասին կարելի էր կարդալ, օրինակ, հնդեվրոպական հնագիտության վերաբերյալ Ջ. Մելորիի աշխատության մեջ, որն ի միջի այլոց, հղվում է բաժնի գրականության ցանկում)¹¹:

Հակառակ Ռասելի կարծիքի, հայոց աղգածագման հայաստական վարկածը միայն հայ գիտնականների կողմից չի ստեղծվել: Հաշվի առնելով Հայք և Հայաստան երկրների տարածքային դոնե մասնակի համընկումը և անվանումների պարզորոշ համադրելիությունը, զարմանալի բան կլինեք, եթե այդ տեսակետը չծագեր Հայաստանի վերաբերյալ խեթական նորահայտ արձանագրություններին ծանոթացող տարբեր մասնագետների մոտ: Եվ իրոք, 1920-ականների կեսերից մինչև 30-ականների սկիզբը այս տեսակետը համարյա միտժամանակ առաջարկել են Ն. Մարտիրոսյանը (1924), Կ. Ռոսը (1927), Գ. Ղափանցյանը (1931), Պ. Կրեչմերը (1932) և Ա. Խաչատրյանը (1933): Հետագայում այս վարկածը, որն ընդգրկուն ձևով ներկայացվել է Գ. Ղափանցյանի մենագրության մեջ¹², արժանացել է լայն ճանաչման¹³: Այս տեսակետի կողմնակիցներ են, հարցին իրազեկ ժամանակակից նշանավոր գիտնականներից, օրինակ, Գ. Ջահուկյանը և Վ. Իվանովը¹⁴: Ընդհանրապես, հարցին տեղյակ ժամանակակից նշանավոր մասնագետներից այդ տեսակետը չէր ընդունում միայն Դյակոնովը:

Գիտության վերջին բացահայտումները ևս խոսում են ընդդեմ դյակոնովյան վարկածի: Ստորև ներկայացվում է միայն մեկ մեջբերում, որը ցույց է տալիս, թե որքան անընդունելի է համարվում Դյակոնովի տե-

11 Ի միջի այլոց, հնդեվրոպական նախահայրենիքի մ.թ.ա. հինգերորդ և չորրորդ հազարամյակներում տեղայնացումն այլուրեք չի ժխտում հայերի լեզվական նախնիների տեղայնացումը Հայաստանում, ասենք չորրորդ կամ երրորդ հազարամյակից (օրինակ, Մ. Գիմրուտասը, որն այդ նախահայրենիքը անդայնացնում էր բոլորովին էլ ոչ Հայաստանի մերձակալքում, հնդեվրոպացիների հայտնվելը Հայաստանում ժամանակագրում էր մ.թ.ա. չորրորդ հազարամյակի կեսերով):

12 Г. К а п а н ц я н. Хайаса — колыбель армян. Ереван 1948.

13 Տե՛ս, օրինակ Գ. Դ շ ա յ կ յ ա ն. Хайасский язык и его отношение к индоевропейским языкам. Ереван, 1964, с. 9–10, հարցի գրականությամբ:

14 Տե՛ս, օրինակ Գ. Դ շ ա յ կ յ ա ն. О соотношении хайасского и армянского языков. — ИФЖ, 1988, №1, с. 60-79; №2, с. 68-88, հարցի պատմությամբ. В. И в а н о в. Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну. — ИФЖ, 1983, №4, с. 30-33; Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси 1984, с. 913 (այս աշխատությունը հրատարակվել է նաև անգլերեն):

սուլթյունը նաև ոչ Հայկական և Հույժ գիտական որոշ շրջանակներում: Ըստ Վ. Իվանովի, Հնագույն *Ha(y)a* անվանաբանական տարրի վերաբերյալ նոր բացահայտումները (իսկ այն Հանդես է գալիս տարածաշրջանի Հնագույն անվանաբանության մեջ արդեն մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսից, ընդ որում, երբեմն կասված *Armen* և *Azzi* ցեղա-տեղանունների հետ համադրելի անունների հետ) «Հաստատում են Գ. Ա. Ղափանցյանի եզրակացությունները և Ի. Մ. Դյակոնովի կառույցների լիակատար սխալականությունը»¹⁵: Ավելին, ըստ Հնագիտության տվյալների, Հայկական լեռնաշխարհի արևմուտքում մ.թ.ա. XIII դարում հայտնված նոր մշակութային կրողները, որոնց կարելի է նույնացնել ասորեստանյան աղբյուրների մուշկերի ու նրանց հետ հիշված մյուս ցեղերի հետ, գաղթել են ոչ թե Բալկաններից, այլ Հայկական լեռնաշխարհի հյուսիսից, որը փաստորեն ժխտում է XIII դարի բալկանյան դաղթի վարկածը՝ Դյակոնովի տեսության հիմնական դրույթը¹⁶:

Ինչ վերաբերում է Հայագիտությանն առնչվող արևմտյան հեղինակներին, նրանք միայն կարող են հղել կամ համակիր լինել այդ հանրահայտ երկու կարծիքներից որևէ մեկին, քանի որ նոր տեսակետներ, կամ դոնե փաստեր, կռվաններ ու հատուկ վերլուծություններ, ի տարբերություն, ասենք, Ի. Դյակոնովի, Գ. Զահուկյանի կամ Վ. Իվանովի, դեռևս ի վիճակի չեն ներկայացնելու (հաշվի առնելով ներկա վիճակը, իրոք դժվար է պատկերացնել թե արևմուտքում Հայագիտության հետ առնչվող ինչ որ մեկը հանկարծ, ասենք, մի նոր կարևոր սեսյագիր աղբյուր կմտցնի շրջանառության մեջ, կամ հանդես կդա նոր, գիտականորեն հիմնավորված անկախ կարծիքով կամ վերլուծությամբ): Այն, ինչ վերջերս արվել է այդ ուղղությամբ արևմուտքում, դա միայն Ի. Դյակոնովի գրքի անդլերեն թարգմանությունից քաղված տեղեկությունների հիման վրա ոմանց արտահայտած մտքերն են:

Հայ ժողովրդի ազգածագումը, նախապատմությունը, կազմավորումը և Ուրարտուի ողջ պատմությունը միավորված են վերը նշված 17 էջում: Դա բացարձակապես բավարար չէ, եթե նույնիսկ հաշվի չառնենք, որ այդ էջերն անհասկանալի և անիմաստ կերպով հեղեղված են հեղինակի կասկածելի մտքերով, ինքնահնար լեզբներով, տեսությունների անլուրջ շարադրանքով, լեզվաբանական մարզանքներով և այլն: Ուղղակի զարմանալի է «Բիսյնիլի-Ուրարտուի պատմությունը» գլխին հասկացված է մեկ ու կես էջ (26-28), այն էլ, բառիս բուն իմաստով, մի քանի նախադասություն, այդ թվում՝ Արամուի ու Արգիշտի երկրորդի մասին հիշված զարմանալի մտքերը, մնացածում խոսվում է դործի հետ կապ չունեցող այլևայլ հարցերից՝ Ստրաբոնից, լեզբնդար Պարույր Սկայորդուց, Աստվածաշնչից,

15 В. И в а н о в. Выделение разных хронологических слоев..., с. 30, ком. 31.

16 Ա. Ք ո ս յ ա ն. «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը. - ՊԲՀ, 1996, 1-2, 214-218. А. К о с с и а н. The Mushki Problem Reconsidered - *Studi Micenei ed Egeo-Anatolici* XXXIX/2. 1997, 260-262. Ն ու յ ն ի՝ Մ.թ.ա. XIII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը. Երևան 1999, էջ 162 և հան., հարցի գրականությունը (այս խնդիրները վաղուց ի վեր արծարծվում են թուրք և արևմտյան հնագետների աշխատություններում):

Կյուրոսի ու Տիգրանի լեզենդներից և Ռասելին այնքան հոգեհարազատ հին իրանական ցեղերից:

Միանգամայն անլուրջ ձևով է ներկայացված նաև «Բիսյանիլի-Ուրարտուի մշակույթը» (էջ 26-31), ուր, օրինակ, մի ամբողջ էջ անհարկի խոսվում է Ն. Ադոնցի հետևություններ անառախական համարվող, այսինքն Ուրարտուի հետ կապ չունեցող, Տորք Անգեղի մասին:

Հետաքրքիր է նաև բաժնի դրականություն ցանկը: Չկան Հղված, օրինակ, Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակությունը, ապա և Մարկվարտի, Ադոնցի, Երեմյանի, Ղափանցյանի, Մելիքիշվիլու, Գամկելիձեի և Իվանովի հիմնարար աշխատությունները, բայց գրափոխարեն աչքի են զարնում Ռասելի՝ Հայոց ազգածագման խնդրի և Ուրարտուի պատմության հետ, մեղմ ասած, հեռավոր առնչություն ունեցող վեց հոդվածները¹⁷ (ընդհանրապես, ողջ երկհատորյակի դրականության լայնածավալ ցանկում մի քանի հայաստանցի հեղինակ է հիշվում):

Ռասելի շարագրանքն սկսվում է այնպես, ինչպես օրինակ Հայերի մասին իր ակնարկներն էր սկսում Ա. Մեյեն XX դարասկզբին՝ «Հայերի վերաբերյալ պատմական առաջին հիշատակությունն է հայտ է գալիս մ.թ.ա. 518 թ. Պարսից Աքեմենյան արքա Դարեհ առաջինի բեհիսթունյան ժայռափոր արձանագրության մեջ» (էջ 19)¹⁸: Բաժնի վերջին հատվածը (էջ 34-35) վերնագրված է «Հայաստանի պատմական դարաշրջանի սկիզբը», որից կարելի է գլխի ընկնել, որ ըստ հեղինակի այդ դարաշրջանը Հայաստանում սկսվում է Ուրարտուի անկումից հետո: Հպանցիկ նշենք, որ շատ ջրեր են հոսել Մեյեի ժամանակներից, և որ Հայաստանի հին պատմության հենց ուրարտական դարաշրջանն է լավագույնս պատմականորեն ներկայացված մեծաքանակ սեպագիր արձանագրություններով: Այսպիսով, թեև Դյակոնովի հետևությունները այնուամենայնիվ հիշվում է, որ Հայերն «անվիճելիորեն» ներկա էին Հայաստանում մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջից (էջ 26), բայց և այնպես Հայոց պատմության սկիզբը հանգեցվում է մ.թ.ա. VI դարին, երբ առաջին անգամ է հայտ է գալիս հին պրսկ. *Armina* տերմինը:

17 Ահա դրանց վերնագրերը՝ «Ջրադաշտական խնդիրներ Հայաստանում. Միհր և Վահագն», «Նախաքրիստոնեական Հայ կրոնը», «Միստիկի մի ծննդյան տոն Հայաստանում», «Հովհաննես Թլկուրանցիի և Հայ միջնադարյան քնարական ավանդույթը», «Ջրադաշտականությունը Հայաստանում», «Արհեստը և միթրայիզմը վերաքննարկված»:

18 Տե՛ս, օրինակ, Ա. Մեյեն. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան 1978, 514, 518՝ Իրականում Արմինա և արմեն ձևերը Հայաստանի բնակիչներին օտարների կողմից արվող անվանումներ են (ալլոնիմ): Այսպիսով, թեև եվրոպական լեզվով հարթ է հնչում, որ «արմեններին» մասին առաջին տեղեկությունը կապվում է մ.թ.ա. հին պրսկ. Արմինա (իրականում՝ նաև հուն. արմեն) ձևի հետ, բայց փաստորեն դա այնքան էլ միարժեք չէ: Ի միջի այլոց, Բեհիսթունի «արմինացիների» վերաբերյալ հնարավոր են նաև այլ կարծիքներ, իսկ ընդհանրապես, ըստ բաղմամբի գիտնականների, այդ թվում և Մարկվարտի ու Դյակոնովի, արմեն ցեղանվան հիմքում ընկած է Սասունի շրջանի հնագույն Արմեն ցեղա-տեղանունը, ավանդված ուրարտական տեքստերում (այս տեսակետը նշված է նաև Ռասելի հեղինակում): Վերջինս էլ պետք է կապվի արդեն մ.թ.ա. երրորդ հազարամյակի հնադուրյան սեպագիր աղբյուրներից Հայտնի, Հայկական լեռնաշխարհի հարվում և հարակից շրջաններում տարածված Ար(ա)մ- անվանաբանական տարրը պարունակող բաղմամբի անվանումների հետ. տե՛ս Ա. Պե տր ո ս յ ա ն. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և Հայոց ազգածագման խնդիրը. Երևան, 1997, էջ 162 և հան.:

Գրքի խմբագիր Ռ. Հովհաննիսյանն իր ներածական խոսքում նույնպես գրում է, որ Հայաստանի նախաքրիստոնեական պատմությունը տևել է ավելի քան հազար տարի (էջ VII), այսինքն, սկսվում է Ուրարտուի անկումից հետո: Ավելի առաջ է դնում հայոց պատմության հետուրարտական փուլերի գլուխների հեղինակ Ն. Գարսոյանը, ըստ որի Ուրարտուի անկումից հետո պարսիկների դրաված հողերի (Հայաստանի) բնակչության մեջ հայերը «նոր եկած» (newly come) մի տարր էին (էջ 40):

Այս առթիվ ստորև ներկայացվում են երկու մեջբերում Ռասելի և նրա համահեղինակների համապատասխան գիտելիքների աղբյուր Ի. Դյակոնովից: «Երկար ժամանակ գիտնականների ընդհանուր կարծիքն էր, որ հայերը և հայերեն լեզուն հայտնվել են լեոնաշխարհում (Հայկական-Ա. Պ.) այն ժամանակ, երբ Արմենիա տերմինն է վկայվել առաջին անգամ, այսինքն մ.թ.ա. VI դարում, և հայոց պատմությունը պետք է սկսվի այս դարաշրջանից: Այս տեսակետը պետք է համարվի միամիտ և բոլորովին ոչ բավարար»¹⁹: Ապա և՛ «ես և նրանք, ովքեր պաշտպանում են իմ տեսակետը, հայերին համարում ենք և՛ նախահայերի, և՛ Հայկական լեոնաշխարհի մեծ մշակույթների ստեղծողների սերունդներ և մշակութային ժառանգներ: Այդպիսի ժառանգությունը ամեն մի ժողովուրդ չէ, որ կարող է Հպարտանալ և չափազանց մեծ շոյալություն է դրանից հրաժարվել»²⁰:

Իր աշխատություններում, տպված ի միջի այլոց նաև անգլերեն, Դյակոնովը ցույց է տվել, որ, սուսնք, այնպիսի մի էական լեզվական միավոր, ինչպես e՛a «և» շաղկապը ուրարտերենում փոխառված է հայերենից, այսինքն հայերը շփման մեջ են գտնվել ուրարտերենի կրողների հետ Ուրարտուի կաղմավորումից ակնհայտորեն ավելի վաղ, ըստ իր կարծիքի մ.թ.ա. XII դարից, իսկ Ուրարտուում կաղմել են երկրի ռազմական դասը²¹:

Իսկ ի՞նչ փաստերի, ի՞նչ դատողությունների հիման վրա են հիշյալ հեղինակները, որոնք հայոց ազգածագման խնդրում կարծես որոշել են հետևել Դյակոնովին, այս հարցում, ի հակադրություն Դյակոնովի, կարծում, որ Հայաստանի պատմությունն սկսվում է մ.թ.ա. VI դարում, Ուրարտուի կործանումից հետո: Մի՞թե նոր փաստեր են հայտնաբերվել: Իհարկե ոչ: Հատկանշական է, որ հայերն էլ, որ նորեկներ են համարվում Հայաստանում մ.թ.ա. XII դարում, ըստ նույն գրքի հաջորդ հատվածի, նորեկներ էին նաև մ.թ.ա. VI դարում: Նույն տրամադրանքով հայերը կարող են նորեկներ համարվել և՛ մ.թ. VI դարում, և՛ հիմա:

Այս առթիվ գրքի հեղինակներին պետք է ասել հետևյալը: Եթե գուք, հետևելով Դյակոնովին, հարցը ներկայացնում եք այնպես, որ հայերենի նախնական կրողները մի ոչ այնքան մեծաթիվ զանգված էին ներկայացնում մ.թ.ա. XII դարում, որոնք հետագայում կարողացան իրենց միա-

19 I. D i a k o n o f f. The Pre-History... p. 104.

20 И. Д ъ я к о н о в. К праистории армянского языка. — ИФЖ, 1983, №4, с. 178. S b u և The Pre-History... p. 129.

21 I. D i a k o n o f f. First Evidence of the Proto-Armenian Language in Eastern Anatolia.—Annual of Armenian Linguistics. Vol. 13, 1992, p. 52-53. Ուրարտերենում և Ուրարտուի անվանաբանության մեջ այլ բազմաթիվ հայկական տարրերի վերաբերյալ տե՛ս Հասկայես Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ուրարտերենը և հայերենը. Ուրարտու-Հայաստան. Երեւան, 1988, էջ 148-161, և նույն հեղինակի այլ աշխատություններն այդ թեմայով:

ձուլել Հայկական լեռնաշխարհի նախնական ողջ բնակչությունը, կամ այլևայլ պատճառներով չեք ընդունում նույնիսկ Դյակոնովի կարծիքն ու Հայերի գալուստը վերագրում եք մ.թ.ա. VI դարին, ապա, այդ տրամաբանությունը, շարունակելով հետևել կամ չհետևել Դյակոնովին, պետք է ընդունեք, որ Հայերը, հիմնականում, տեղի հնադույն ժողովուրդների, և հատկապես Ուրարտուի ժառանգներն են: Այդ դեպքում Հայ ժողովրդի պատմությունը ներկայանում է որպես Ուրարտուի պատմության շարունակությունը և Հայոց պատմության վերաբերյալ գրքում Ուրարտուի պատմությունը և մշակույթը պետք է ներկայացվի լիարժեք կերպով: Ավելին, ըստ բոլոր լուրջ ուսումնասիրողների, այդ թվում և Դյակոնովի, Հայոց պատմության մեջ պետք է ներկայացնել նաև Հայաստանի տարածքի նախաուրարտական ցեղային կաղմավորումները, դա է օրեկտիվ իրականությունը, որը բացարձակապես կապ չունի աղգայնականության հետ:

Բայց, եթե Հայոց պատմության գրքում Ուրարտուին նվիրվում է մի քանի էջ միայն, այն էլ իրական, հանրահայտ պատմական փաստերի փոխարեն ներկայացված լեգենդներով, ապա դրանով շեշտվում է, որ Հայերը Ուրարտուի ո՛չ կենսաբանական, ո՛չ մշակութային ժառանգները չեն: Ապա ովքե՞ր են: Բալկաններից եկած մի խումբ բարբարոսնե՞ր, որոնք ոչ թե ժառանգեցին, այլ կործանեցին տեղի մշակույթը ոչինչ չստեղծելով (չէ՞ որ ըստ Ռասելի և նրա համախոհների, ողջ Հայ մշակույթը յուրացված է իրանականից, տե՛ս ստորև): Այս մոտեցումն արդեն համահունչ է թուրքական պաշտոնական հակահայ քարոզչությանը: Այն, նույնիսկ անկախ իր գիտականության աստիճանից, ուղղակի հայագիտական էլ չէ:

Ձ. Ռասելը հեղինակ է նաև բազում հայագիտական հոդվածների և մի մենագրության՝ «Զրադաշտականությունը Հայաստանում»²²: Այդ բոլոր աշխատություններում կարմիր թելի նման անցնում է մեկ և միայն մեկ միտք: Քննարկվող ամբողջ Հայկական նյութը, և ի վերջո ողջ Հայ մշակույթը, որոշ սեմական, խուռա-ուրարտական և անատոլիական ներառումներով, ծագում է իրանականից և գոգույն արտացոլումն է իրանականի: Այս ծայրահեղ մոտեցման հարցում Ռասելն, իհարկե, պարտական է իր ուսուցիչ, ամերիկյան ժամանակակից հայագիտության հիմնադիր Նինա Գարսոյանին, որի աշխատությունները չեն կարող քննարկվել այս հոգվածի սահմաններում: Հընթացս նշենք, որ խնդրո առարկա գրքի գլուխների նշանակալի մասը գրված է Գարսոյանի և նրա աշակերտների կողմից (ինքը՝ Գարսոյանը դրել է վեց գլուխ):

Բացարձակապես անիմաստ է ներկա հրապարակման մեջ լրջորեն քննարկել Ռասելի զարմանալի մտքերն ու «գլուտերը», ուղղված Հայկական իրականության մեջ ամենուր եղած ու չեղած իրանական տարրի ինքնանպատակ որոնումներին՝ նրա պանիրանական մոտեցումը հասնում է անհեթեթության: Օրինակ, եթե քննվում են, ասենք, արծվի, շան, վարազի, արևի, հերոսի գերբնական ծննդի վերաբերյալ Հայ ժողովրդական պատկերացումները, միանգամից որպես դրանց միակ աղբյուր են հռչակվում ինչ-որ իրանական նախօրինակներ: Ընդ որում, իրանական պատկերացումը կարող է միայն հեռավոր նմանություն ունենալ կամ չունենալ Հայկական

22 J. R u s s e l I. Zoroastrianism in Armenia.

նի հետ, կամ նույնիսկ գոյություն չունենալ. միևնույն է, բանաձևը գտնված է՝ ամեն ինչ պետք է հանգեցվի իրանական իրական կամ ենթադրյալ նախահիմքերի²³:

Ակնհայտ է, որ ոչ թե պետք է մերժել հայերի (ապա և կովկասյան, սլավոնական, թուրքական և այլ ժողովուրդների) վրա իրանական մշակույթի նշանակալի ազդեցության փաստը, որին անդրադարձել ու անդրադառնում են բազմաթիվ գիտնականներ, այդ թվում և բոլոր ականավոր հայագետները, այլ հասկանալ ամեն ինչ իրանականին հանգեցնելու մեթոդական անընդունելիությունը: Ի վերջո, պետք է չափի զգացում ունենալ Ռասելի հայագիտական համարվող աշխատանքները, նույնիսկ անկախ գիտականության աստիճանից, փաստորեն պանիրանական մարզանքներ են միայն:

Այսպիսի հեզինակին քննադատելիս լավագույն մոտեցումը նրա աշխատություններում անիրազեկության և սխալների ցուցադրումն է, որը և կբացահայտի նրա կարծիքների ու կոնցեպցիաների իսկական արժեքը: Ստորև կխոսվի մի քանի նման սխալների մասին:

Ռասելը հաճախ է անդրադառնում Վահագն աստծուն (նրա հոդվածների մի նշանակալի մասն առնչվում է հայոց նախաքրիստոնեական կրոնին, որի գծով և նա մասնագետ է համարվում): Ահա սխալների օրինակներ այդ թեմայով գրված նրա միայն մի հոդվածից²⁴. 1. Հայոց դիցարանը ներառել է նաև «սիրիական Բարշամինին [...] նույնացված Արամադդի հետ», 2. «Տակիտոսը պատմում է մեզ, որ Արտաշես առաջինը [...] միավորել էր Հայկական լեռնաշխարհի տարբեր ժողովուրդներին մեկ թագի և լեզվի ներքո», 3. «Վահագնի երգի» նախավերջին տողն անգլերեն թարգմանված է՝ «նա կրակե բեղեր ուներ» (*he had fire moustaches*), ընդ որում երկու տեղ, այսինքն դա վրիպակ է: Այդ առթիվ պետք է ասել, որ՝ 1. Բարշամինը Հայաստանում չի նույնացվել Արամադդի հետ, այլ հիշվում է որպես առանձին աստված, 2. Արտաշես Առաջինի վերաբերյալ այդ տեղեկությունը դալիս է ոչ թե Տակիտոսից, այլ Ստրաբոնից, 3. Վահագնը «բոց ունէր մօրուս», որը Ռասելը համարյա թե ճիշտ թարգմանել է մի այլ տեղ (*fiery beard* «կրակե մորուք»²⁵):

Մեր հեղինակը վերջին տարիներին անընդհատ անդրադառնում է «Սասնա Մռերին» և հատկապես Փոքր Մհերի կերպարին: Ահա մի միտք այդ ելույթներից մեկից, որը ցույց է տալիս, որ նա չի էլ կարդացել հայկական էպոսը, կամ, լավադուրյալ դեպքում, ինչպես և ազգածագման ու ռարտագիտության վերաբերյալ աշխատությունները, ժամանակին աչքի է անցկացրել ու մոռացել է այն: Նա գտնում է, որ Միթրա-Միհրի (= Մհեր) «ցուլ զոհաբերելու ասպեկտը չի արտացոլվել էպոսում»²⁶: Իրականում այդ մոտիվը շատ պարզ պահպանվել է Մեծ Մհերի կոմիք Աև եզին սպա-

23 Ibid. passim. Նույնը և հեղինակի այլ աշխատություններում:

24 J. R u s s e l l. Carmina Vahagni. – Acta Antiqua (Budapest), 32, fasc. 3-4. (1989), pp. 317-330.

25 J. R u s s e l l. Zoroastrianism..., p. 197. Ավելի ճիշտ կլիներ՝ *flame he had for beard*.

26 J. R u s s e l l. The Ancient Sources of the Epic of Sasun. Lecture at the Armenian Library and Museum of America. Watertown, MA, Jan. 24, 1995, p. 4.

ներու դրվագում, որը կարելի էր կարդալ «Սասնա Մոերի» բազում պատմաներում, համահավաք տեքստում և Ռասելի մայրենի լեզվով եղած երկու՝ Շայյանի ու Սյուրմելյանի թարգմանություններում²⁷:

«Սասնա Մոերի» վերաբերյալ Ռասելի մոտեցումը լավագույնս բացահայտվում է նրա, ըստ իս, գռեհիկ մի համեմատությունում՝ թե այն իր մեջ «գոլգորդել է տարածին՝ իրանական և սեմական ասպեկտներ [...] այնպես հարմոնիկ լսելու համար, որքան իսրայելական (մե՛ որով բե-պիտա կոչված – Ա. Պ.) բուտերբրոտն է կուլ տալու համար»²⁸: Ճաշակին, իհարկե, ընկեր չկա, բայց «Սասնա Մոերն» ակնհայտորեն ուրիշ տարրեր էլ է պարունակում, արժանի նշվելու այդ խոհանոցային համեմատության մեջ: Ձէ՛ որ վաղուց ի վեր հրապարակվում են աշխատություններ նվիրված Հայկական էպոսի բնիկ Հայկական՝ Հնդեվրոպական²⁹ և Հինարևելյան, օրինակ, խուռա-ուրարտական³⁰ արմատներին, էլ չխոսենք կովկասյան ակնհայտ գուղահեռների մասին: Հետաքրքիր է, որ իր որոշ աշխատություններում մեր հեղինակը խուռիական, իհարկե արդեն վաղուց գտնված³¹, կայեր է փնտրում էպոսում:

Ռասելը հատկապես անտեղյակ է ուրարտագիտության բնագավառին, որին շատ է սիրում տեղի-անտեղի անդրազառնալ: Ամենուր, նաև հայոց ազդածագմանը նվիրված իր բաժնում (էջ 30) և էպոսի վերաբերյալ գործերում, Վանա ժայռի «Մհերի դուռ», հնում «Խալդիի դարպասը» չղիտես ինչու ներկայացվում է որպես «աստծու դարպասներ»³², որն արդեն բացառում է Փոքր Մհերի կերպարի ճիշտ մեկնաբանությունը: Ուրարտական տեքստերի ոչ մի հրատարակության մեջ «Խալդիի դարպասը» որպես ինչ-որ վերացական «աստծու դարպաս» չի թարգմանվել, այսինքն՝ հեղինակն ուղղակի անտեղյակ է ուրարտական տեքստերին:

Մեր հեղինակը չղիտես նաև, որ Հայաստանի հնագույն պատմության ասպարեզում իր միակ հեղինակությունն ի. Դյակոնովը ցույց է տվել, որ Մհերը, որը մտնում է «Խալդիի դարպասից» ներս ու պետք է դուրս գա այնտեղից, այսպիսով, նույնանում է Խալդիի հետ՝ նրա վիպականացած

27 David of Sasoun: the Armenian Folk Epic in Four Cycles (ed. tr. Shalian A. K.). Athens, Ohio, 1964, p. 129. Dareddevils of Sasoon: the Armenian Traditional Epic by Leon Surmelian. London, 1964, 88.

28 J. R u s s e l l. Me'orav be-Pita: Iran and Israel in the Armenian Epic of Sasun. Irano-Judaica Conference IV. The Hebrew University, Jerusalem. July 3-6. 1994.

29 Տե՛ս, օրինակ, Մ. Արեղյան. Երկեր. Հ. Ա, էջ 414. Ս. Հարությունյան. Վիշապամարը «Սասնա Մոերում».— «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, 11, էջ 65-85. Մ. Ա. Շյալյան. «Սասնա Մոեր» էպոսը և Հնդեվրոպական երեք ֆունկցիաները.— ՊԲՀ, 1985, №1, էջ 32-46. G. D u m é z i l. Le roman des jumeaux. Paris. 1994, p. 121 seq. Ա. Պետրոսյան. Հայկական էպոսի հնագույն ակունքները. Երևան, 1997. Հարցի պատմությունը:

30 Տես հատկապես И. Дьяконов. К вопросу о символе Халди. — Древний Восток, 4. Ереван. 1983, с. 190-194.

31 Փոքր Մհերի կերպարի կովկասյան գուղահեռների քարից (վերա)ծնվող հերոսի խուռիական և հինաստուղիական կապերի վերաբերյալ տե՛ս օրինակ В. А р д з и н б а. Нартский сюжет о рождении героя из камня. — Древняя Анатолия. М., 1985, с. 157 сл.

32 J. R u s s e l l. Zoroastrianism..., p. 29, 272. I d e m. The Ancient sources of the Epic of Sasun, p. 5.

Հաջորդն է, և ունի, այսպիսով, տեղական Հնագույն, նախաիրանական դարաշրջանից եկող արմատներ³³, իսկ իր միջին իրանական անունը ձեռք է բերել հետագայում: Բայց դա նրան չի խանգարել գրելու բազում հոգվածներ այս հարցերի շուրջը, այդ թվում մեկը՝ նույնիսկ ընդհանրացնող բնույթի³⁴, որտեղ կրկնվում է նույն սխալը:

Ըստ Ռասելի, ուրարտական մեծ աստվածների եռյակի մաս են կազմել իսադին՝ աստվածների հայրը, որին իբր ձիեր, եղներ ու ոչխարներ են զոհաբերել. և Արդինին՝ արևի աստվածը³⁵: Իրականում ոչ մի տեղեկություն չկա թե իսադին աստվածների հայրն է, և նրան զոհաբերել են ուլեր (և ոչ ձիեր), եզներ ու ոչխարներ: Ուրարտական արևի աստծու անունն էլ Շիվինի է, իսկ Արդինին այդ աստծու անվան բազում տասնամյակներ առաջ մերժված ձևն է: Այնուհետև, նա ամենուր նշում է, որ Վանի ուրարտական Տուշպա անունը կապված է Թեյշբա աստծու անվանը³⁶: Սա ևս տասնամյակներ առաջ մերժված տեսակետ է. և Տուշպան, ամենայն հավանականությամբ, պետք է կապվի Շիվինի կնոջ՝ Տուշպուեա զիցուհու հետ³⁷:

Հեղինակի ուրարտագիտական այս հնացած տեղեկությունների աղբյուրը Ն. Ադոնցի «Հայաստանի պատմություն» մենագրությունն է: Ինչ վերաբերում է իսադիի հանելուկային ձիերին, ապա գրքի Ֆրանսերեն բնագրում վրիպակ կա, *chevreaux*-ի (ուլեր) փոխարեն տպվել է *chevraux*, որը հայերեն թարգմանիչն ընկալել է որպես *chevaux* (ձիեր), բայց մի քանի տող հետո արդեն նշվում են իսադիի ուլերը³⁸: Մեր հեղինակը չի էլ նկատել այդ հակասությունը և չի էլ մտածել բացել ուրարտական արձանագրությունների Սեյսի, Դյոնիդի կամ Մելիքիշվիլու հրատարակությունները:

Իսկ ի՞նչ է ասել քննադատական միտքը: Հայաստանյան գիտությունների մեջ «Հայ ժողովուրդը հնից մինչև նոր ժամանակները» ամբրիկյան երկհատորյակը արգեն բացասական դնահատականի է արժանացել Ա. Այվազյանի կողմից: Կոնկրետ Ռասելի հեղինակած հոգվածում քննադատվել է Հայաստանը թուրքական տերմինով որպես Արևելյան Անատոլիա ներկայացնելը, հայերին միարժեք կերպով եկվոր ժողովուրդ համարելը, Հայասան որպես մի տարածք միայն հիշելը և հայերի ազդածագման հայասական վարկածի փաստորեն մոռացություն մատնելը³⁹:

33 И. Дьяконов. К вопросу о символе Халди.

34 J. R u s s e l l. On the Armeno-Iranian Roots of Mithraism. – *Studies in Mithraism*, Rome.

35 J. R u s s e l l. Zoroastrianism..., p. 28.

36 Տե՛ս, օրինակ, ibid, p. 362. J. R u s s e l l. Zoroastrian problems in Armenia: Mithr and Vahagn. *Classical Armenian Culture. Influences and Creativity* (ed. Th. Samuelian). – *University of Pennsylvania Armenian Texts and Studies*. Vol. 4, p. 3. I d e m. On the Armeno-Iranian Roots of Mithraism.

37 Տե՛ս, օրինակ, Г. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 443. Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, 1990, էջ 46:

38 N. A d o n t z. Histoire d'Arménie. Paris, 1946, p. 223. Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 225:

39 Ա. Այվազյան. Հայաստանի պատմության լուսաբանումը ամբրիկյան պատմագիտության մեջ. քննական տեսություն. Երևան 1998, էջ 223-227:

Հայտնի են Ռ. Հովհաննիսյանի մի շարք ելույթները Ա. Այվազյանի ընդհանուր ու գրավոր քննադատության վերաբերյալ: Հարցը ներկայացվում է այսպես՝ հայաստանցի որոշ պատմաբաններ ուղղում են հայերին համարել Հայաստանի բնիկներ, մինչդեռ հայերի ազգածագման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ. ամերիկյան գիտնականներն էլ կաշկանդված չեն պարտադրված կարծիքներով և իր գործն է այդ տեսակետները ներկայացնելը⁴⁰:

Քննադատությունը, առնվազն ակադեմիական շրջանակներում, բոլորովին էլ դեմ չի հայերի ծագման վերաբերյալ տարբեր դիտական տեսակետների ներկայացմանը: Բայց ինդրո առարկա դրքում, այն էլ վերին աստիճանի անլուրջ կերպով, ներկայացված է փաստորեն միայն մեկ Դյակոնովի տեսակետը, իսկ անհամեմատելիորեն ավելի լայն տարածված Հայաստանի վարկածը հիշվում է որպես միայն հայերի կողմից առաջ քաշված ինչ-որ ոչ դիտական մի բան, այն էլ հնգեվրոպական նախահայրենիքի շատ կասկածելի «ուեիդիոնիստական» տեսակետների անկապ շարագրանքի համատեքստում: Այսպիսով, քննադատությունն ուղղված է ընդհակառակը, գրքի կողմնակալության, մեկ տեսակետի վրա անհարկի հիմնվելու, ապա և հեղինակի, որին չէր կարելի այդպիսի հոգված հանձնարարել, անիրագրելիության դեմ⁴¹: Արժե նշել նաև, որ իր հարցազրույցներից մեկում Ռ. Հովհաննիսյանը շատ ճիշտ կերպով նկատում է, թե այն 20 տարում, որ տեղի է այս գրքի հեղինակների հետ իր աշխատանքը, նա ինքը կարող էր նման մի գիրք (և կարելի է կարծել, շատ ավելի լավը) հինգ անգամ սկզբից մինչև վերջ գրած լինել⁴²:

Արեմուռաքում մեզ հայտնի է միայն լեզվաբան Ջոն Գրեպինի դրական կարծիքը նշված երկհատորյակի մասին: Ջ. Գրեպինը Ռասելին քննադատում է միայն Դյակոնովի գաղափարներից չափից ավելի կառչելու համար⁴³: Խաթերենի և իսթերենի նույնացումը չնշելը թողնելով մասնադեպ լեզվաբանի խղճին, ավելացնենք, որ սեփական հնարանքներն ու մտակառուցումները որպես ընդունված պատմական փաստեր և ժողովրդական լեզենգներ ներկայացնելն ու քննարկելն իրոք արտառոց երևույթ է, և կողմնակի ընթացողի մտքով երբեք չի անցնի կասկածի ենթարկել Հարվարդի պրոֆեսորի տեղեկություններն ու վերլուծությունները:

40 R. H o v a n n i s i a n. Unresolved Issues in Twentieth Century Armenian History. – Contemporary Caucasus Newsletter. The Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies 7. Winter 1998-1999, p. 18. Տե՛ս և նրա հարցազրույցները «Իրավունք» շաբաթաթերթի 1999-ի № 27, 35 և «Հայացք Երևանից» հանդեսի 1999-ի № 15 համարներում (էջ 14-16):

41 Այստեղ անհրաժեշտ է ասել հետևյալը: 1991 թվականի աշնանը, Լոս Անջելեսում Ռիչարդ Հովհաննիսյանը ինձ և Հնագիտության և ազգագրության ինստիտուտի այն ժամանակվա տնօրենի տեղակալ Գ. Արեշյանին հանձնեց Ռասելի այս աշխատության նախնական տարբերակը կարծիք հայտնելու համար: Ես գրավոր կարծիք ներկայացրեցի, որի սևագիրը, Ռասելի ձեռագրի հետ, պահվում է ինձ մոտ: Ցավով արձանագրում եմ, որ նշված սխալները և վրիպակները չեն ուղղվել. դրանց մի մասն ուղղակի դուրս է մնացել հոդվածի կրճատման հետևանքով: Գ. Արեշյանը նույնպես կարծիք էր տվել, որտեղ, օրինակ, նշել էր Վահագնի ու Բելի անհեթեթ դրվագը: Ինձ անհասկանալի է մնում այս կարծիքները հաշվի չառնելը:

42 «Հայացք Երևանից», 1999, № 15, էջ 16:

43 J. G r e p i n. Booknotes. – Annual of Armenian Linguistics. Vol. 18, 1997, pp. 79–

Վերը քննարկված օրինակներից երևում է Ռասելի ոչ միայն անտեղյակությունը, այլև կանխակալությունը: Միայն մեկ պարթերություն մեջ, խեթական հզոր կայսրության հետ հաջողությամբ պատերազմող Հայաստանի թագավորությունը որպես միայն մի չժամանակագրված տարածաշրջան հիշելը, ապա հայաստական տեսության անանուն հայ հեղինակները և «ոչ հայ ուսուցիչները», որոնք, ի հակադրություն այսպիսով ակնարկվող «հայ անունների» (հայաստական տեսության «ոչ դիտական կողմնակիցների», գրված էր հոգևածի ձեռագրում) հայերենը խուռա-ուրարտական լեզու է են համարում, պարզորոշ բացահայտում են հեղինակի հայոց պատմության և հայաստանյան գիտության նսեմացման միտումը: Իսկ ամենուրեք դրսևորվող արտառոց սխալները, որոնք պայմանավորված են ոչ միայն անտեղյակությամբ, այլև անպատասխանատու վերաբերմունքով, արհամարհանքի ամենավառ վկայություններ են (հայոց պատմության ռասելյան հատվածում հանգիպող որոշ սխալ տեղեկություններ ժամանակին միանգամայն ճիշտ են ներկայացվել նրա իսկ նախորդ աշխատություններում, այսինքն այդ բաժինը գրելիս նա չի էլ մտածել մեկ անգամ ևս նայել իր հաղորդած տեղեկությունների աղբյուրները, այլ հենվել է իր վատ հիշողության վրա):

Նույնը վերաբերում է հայկական մշակույթում իրանական տարրի դերի գերազանահատմանը, որը հայագիտությունը հանիրավի վերածում է իրանագիտության մի երկրորդական բնագավառի: Առաջ, եվրոպականություն, ապա և ֆալսիտական աշխարհայացքների ժամանակներում, արևմտյան գիտնականները իրենց քիմքին հարմար սանդղակներով էին դնահատում այլ մշակույթները, դրում, թե այսինչ կամ այնինչ ժողովուրդներն իրենց մշակույթի բարձրագույն դրսևորումներով պարտական են եվրոպական, կամ գոնե «արիական» հնդիրանական հանճարի ներթափանցմանը: Բայց անցել են այդ ժամանակները, և ներկայումս ոչ ոք, հատկապես ԱՄՆ-ում, չի հանդգնի այդ նսեմացնող կամ անբարյաղուկամ ոճով դնահատել ոչ մի ժողովրդի մշակույթ⁴⁴:

44 Հայոց ազգածագման վերաբերյալ նույնքան անընդունելի կերպով խոսվում է օրինակ, 1983-ին տպված և 1996-ին վերահրատարակված *Transcaucasia, Nationalism, and Social Change. Essays in the History of Armenia, Azerbaijan, and Georgia* (Ann Arbor) գրքում, որի խմբագիրն է Ն. Գարսոյանի աշակերտներից Ռ. Սյունին, իսկ հեղինակներից շատերը նույն դպրոցի ներկայացուցիչներ (Ռ. Հովհաննիսյանի խմբագրած գրքի համահեղինակներ): Այստեղ, ներածական փոքրիկ խոսքի հեղինակը, քստ երևույթին Սյունին ինքը, ի թիվս այլ հարցերի, համառոտ կերպով անդրադառնում է նաև Անդրկովկասի ժողովուրդների ազգածագման խնդրին: Պարզվում է, որ նախավրացիները ձևավորել են Դիաուխի ցեղային միությունը մոտավորապես մ.թ.ա. XII դարում. հայերի ազգածագման խնդիրը մնում է մթին, բայց հիմնականում ընդունվում է, որ նրանք անցել են «արևելյան Անատոլիայի լեռնային բարձրավանդակը» մոտավորապես մ.թ.ա. VI դարում, երբ ուրարտական «թագավորությունը» կործանվեց (էջ 3. նույնիսկ ոչ հայկական յինելով էլ իր դարաշրջանի «գերտերություն» Ուրարտուն Սյունիի անբարյացակամ հայացքի տակ լուկ չակերտավոր թագավորություն է): Իրականում Դիաուխի ցեղա-տեղանունն առաջին անգամ ի հայտ է գալիս ուրարտական Մինուա արքայի (մոտ 810-786 մ.թ.ա.) մի արձանագրության մեջ: Այդ երկիրն, իր տարածքով համապատասխանում է նախկին Հայաստանի կենտրոնական շրջանին: Շատ գիտնականներ, բայց ոչ բոլորը, Դիաուխին համապատասխանեցնում են Ասորեստանի արքա Թիգլաթպալասար առաջինի (1116-1090 թթ. մ.թ.ա.) կողմից հիշվող նախորդ երկրներից մեկին՝ Դայանին: Մ.թ.ա. XII դարի ինքնահայտ Դիաուխին անառարկելիորեն վրացական համարելն ուղղակի ծիծաղելի է (ըստ Սելիքիչիլու, օրինակ, այդ երկիրը իտալական էր) այն փաստի համատեքստում, որ այդ նույն երկրամասի մ.թ.ա. XI – XII դարերի իրական, ոչ հիպոթետիկ Հայաստան անվանումը (*The Pre-History...*, p. 66) ու նրա նույնությունը հասնող նմանությունը հայ ցեղանվան հետ նույնիսկ չի հիշվում:

Հագվագյուտ բացառություններից մեկը Հայագիտությունն է, որտեղ որոշ ուսումնասիրողներ ողջ հին Հայկական իրականությունն ու մշակույթը փաստորեն քննում են որպես միայն իրանական հետազոտությունների և իրանական վերակազմությունների դաշտ (Գարսոյան, Ռասել): Այս դարձանալի մոտեցումը սկզբունքորեն բացառում է Հայկական մշակույթում ծագումով Հայկական գոնե մի շերտի գոյությունը, ամեն դեպքում այդ ուղղությամբ ոչ մի էական բան չի ասվում⁴⁵:

Չնայած դրան, ԱՄՆ-ի Հայկական շրջանակներում Ռասելը շրջապատված է երկրպագուներով, որոնք չեն կարող գնահատել նրա գիտամանկավարժական գործունեությունը, այլ սրտաշարժվում են նրա Հայերենի իմացությունից, որպես Հայանպաստ գնահատվող տարաբնույթ ելույթներից՝ Ուրարտուից մինչև նորանկախ Հայաստան և ցեղասպանությունից մինչև «Սասնա Շուեր», Հարվարդի պրոֆեսորի լուսապսակից ու մենտորական ապլոմբից: Նա այսպես կոչված «մաշտոցյան պրոֆեսոր» է, ամերիկյան ամենագիտակ համարվող Հայագետ, և Հայերի կողմից պարբերաբար արժանանում է պատվավոր կոչումների ու պարգևների⁴⁶:

Ռասելն ու նրա նմանները, ապրելով աշխարհի գիտական կենտրոններում, հսկայական հնարավորություններ ունեն շփվելու անընդհատ դարգացող գիտություն հետ, հետևորդներ ստեղծելու, տպագրվելու, և իրենց կարծիքները պարտադրելու աշխարհին: Հայագիտությունից ստացվող նրանց եկամուտները հարյուրավոր անգամներ գերազանցում են մեր դիտաշխատողների աշխատավարձերը և համագրելի են մեր գիտահետազոտական ինստիտուտների ընդհանրի հետ, ընդ որում նրանք, «Հայագիտությունը զարգացնելու» համար, նշանակալի չափով ֆինանսավորվում են սփյուռքահայ շրջանակների կողմից: Աշխարհի գիտական և ոչ միայն գիտական հրատարակությունները հեղեղած նրանց «գիտական» արտադրանքը, որը մինչև վերջերս լրջորեն չէր քննադատվել⁴⁷, իշխում է Արևմուտքում և պատկերացում ձևավորում Հայոց պատմության ու մշակույթի վերաբերյալ:

Անցած դարաշրջանում Հայագիտությունը իՍՂՄ-ում, ապա՝ անկախ Հայաստանում և Արևմուտքում զարգացել է իրարից անկախ հունեությունով, և նրանց միջև փոխադարձ կապը միանգամայն անրավարար է եղել:

45 Այս համատեքստում հատկանշական է Ռասելի մի կուրյոզային ելույթը, որտեղ, ի պատասխան ուրարտական հիբրոգլիֆների վերծանման փորձի մասին Հաղորդագրություն, նա կայծակնային արագությամբ Հայտարարեց, թե ուրարտական սեպագրի Հայերեն ընթերցումը «բունիաթովականություն» է: Հայերի՝ Հայաստանում հին արմատների վերաբերյալ նույնիսկ վարկածը հունից հանել է մեր հեղինակին, և նա սլահի տակ չի էլ ընկալել սեպագրի և հիբրոգլիֆի տարբերությունը: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ նա, այսպիսով, ԱՄՆ-ում հանդես է գալիս որպես Հայկական իրականության բոլոր հարցերի գծով միջնորդ-փորձագետ:

46 Օրինակ, վերջերս նա ստացել է «Ջեյ Բուիդայն» մրցանակ՝ ի գնահատանք «Հայկական ուսումնասիրություններին և մշակույթին բերած նրա մեծագույն նպաստի և աչքի ընկնող ձեռքբերումների» և Հայկական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ասոցիացիայի «ցկյանս անդամակցության պատվավոր կոչում», (տե՛ս «Ազգ» օրաթերթ, 15 դեկտեմբերի 1999, էջ 7):

47 Այդ ուղղությամբ տես Հատկապես Ա. Այվազյան. Հայաստանի պատմության լուսաբանումը..., ապա նաև՝ V. N e r s i s s i a n. The Art of the Interpreter: A Review Essay.- Journal of the Society for Armenian Studies 9 (1999), pp. 125-134, որտեղ քննադատվում են Ժ.-Պ. Մահեի և Ռ. Թոմսոնի խմբագրությունը 1999-ին հրատարակված Ն. Գարսոյանին նվիրված ժողովածուի՝ Ռասելի, Թոմսոնի և այլոց գործերը:

Միայն դրանով կարող է բացատրվել Ռասելի, որպես երևույթի ձևավորումը: Խաթերենն ու խեթերենն իրարից չտարբերակող, սեփական հնարանքները որպես ժողովրդական ավանդույթյուններ, իսկ հայագիտությունը որպես իրանադիտական վարժությունների դաշտ ներկայացնող հեղինակը, որն իր աշխատությունների համար ոչ թե քննադատվել, այլ խնկարկվել է Միյունքում, այնքան վստահ է իրեն զգում, որ բացարձակ անգիտության մեջ է մեղադրում հայ գիտնականներին (հիշենք հայերենը խուճա-ուլարական չհամարող «ոչ հայ ուսյալներին»):

Այս հոգվածը նպատակ է հետապնդում հայաստանցիների համար ստեղծել հակառակորդի՝ չակերտավոր ամերիկյան «հայագետի» հավաքական մի կերպար: Մեր նպատակներն այլ են՝ 1. հակագիտական մոտեցումներն ու սխալներն, ի վերջո, գոնե պիտի քննադատվեն, իսկ քննադատությունը կարող է սթափեցնել, 2. հայաստանյան հանրությունը պետք է տեղյակ լինի արևմտյան հայագիտության զարգացումներին, 3. հենց Արևմուտքում և ԱՄՆ-ում շահագրգիռ (հատկապես հայկական) շրջանակները պետք է տեղյակ լինեն, թե ինչ մակարդակի վրա է գտնվում ինքն իրեն իբրև միջազգային ստանդարտներին համապատասխան երևույթ մատուցող ամերիկյան հայագիտությունն ու նրա գրողակալները, 4. վերջապես, հարկավոր է մեկընդմիջտ հաշվի նստել այն իրողության հետ, որ հայագիտության մարզի լուրջ հետազոտությունները խոր և լայնածավալ ընդգրկմամբ կատարվել և կատարվում են Հայաստանում:

Այս քննարկումն ամենայն սրությամբ ցույց է տալիս, որ ներկայումս, Ի. Դյակոնովի գրքի հրատարակությունից ավելի քան երեսուն տարի անց, ուղղակի անհրաժեշտ է ունենալ մի նոր ակադեմիական գիրք նվիրված հայոց ազգածագման և նախապատմության խնդիրներին, գրված գիտության արդի տվյալների լույսի ներքո, որը կհրատարակվի նաև անգլերեն և առավել դիտական հուն կտեղափոխի այդ հարցի շուրջ եղած հրապարակումներն ու բանավեճերը: Վերջին տասնամյակներում կուտակված նոր ինֆորմացիան և Հայաստանի գիտական ներուժը բավարար են որակական առաջընթաց ապահովելու այդ գործում՝ կազմակերպչական որոշ օժանդակության դեպքում, միանգամայն հնարավոր է ամենամոտ ապագայում պատրաստել նման մի հրատարակություն:

"АРМЕНОВЕДЧЕСКИЕ" ИЗМЫШЛЕНИЯ ДЖ. РАССЕЛЛА

АРМЕН ПЕТРОСЯН

Резюме

В статье критикуются написанный Дж. Расселлом раздел о предистории армянского народа в недавно опубликованной в США "The Armenian People from Ancient to Modern Times (ed. by R. Novannisian)" (Нью Йорк, 1997), а также разные его работы по различным областям арменоведения. В этих работах автор, в силу своей некомпетентности и несерьезного отношения к предмету, приводит

и анализирует многочисленные лингвистические, исторические и мифологические "факты", которые не имеют ничего общего с реальностью (например, он не отличает хаттов от хеттов, армянского бога Арамазда отождествляет с сирийским Баршамином, бога Вахагна представляет соперником вавилонского тирана Бела и т.д.). Эти странные выдумки, нелепые ошибки и псевдонаучный анализ сочетаются с презрительным отношением к ученым Армении и их трудам.

J. RUSSELL'S "ARMENOLOGICAL" FABRICATIONS

ARMEN PETROSYAN

S u m m a r y

The article presents a criticism of J. Russell's chapter on the formation of the Armenian nation in the recently published "The Armenian People From Ancient to Modern Times" (New York, 1997) and some other his works on various areas of Armenology. Due to his incompetence and a facetious treatment of the subject the author adduces and analyzes numerous linguistic, historical and mythological "facts", which have no resemblance to the realities (e.g. the Hattians and Hittites are not distinguished; the Armenian god Aramazd is regarded as identified with the Syriac Barshamin; the god Vahagn is considered the adversary of the Babylonian tyrant Bel, etc.). These strange fabrications, ridiculous errors and pseudoscientific analysis are combined with a contemptuous attitude to the scholars of Armenia and their works.